



### ՊԷՏՔ Է ԱՆՏԵՍԵԼ...

Շարունակում Ա. ԷջԵԳ

Նախագահ Լաիտոն նշեց յայտարարությունները կատարեց Լիբանանի մեջ գործող հիւսիս-արևմտյան ընդունած պահույն: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համունու:

Պատասխանի մէջ նախագահ Լաիտոն ընդունեց նաեւ հարաւային Լիբանանի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան տը Միսթուրան, որուն հետ քննարկեց շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ հարաւի մէջ արձանագրուած վարձագումները:

Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի նախկին օգնական Ռիչըրտ Մըրֆի եւ Սահմանադրական խորհուրդի նախագահ դատախաչ շէյխ Ամին Նասար:

### ՄԱՃԱԶԴ

- Տոբթ. եւ տիկին Յակոբ Փափագեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Արրահամ Փափագեան եւ զաւակունք Տիրար Նորէն Փափագեան Պոյաճեան ընտանիք
- Տէր եւ տիկին Պարոյր Երէջեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Նահապետեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սահակ Սասթեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Էտուարտ Փելտիմայեան եւ զաւակունք

եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր եւ հարազատին

### ՈՌԶ ՓԱՓԱԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 9 Յունուար 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 10 Յունուար, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Ռեմէյիկ Ս. Յարուսթիւն եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յուանկցութիւնները կ'ընդունուին Մըրֆիէր, «Սարգիսեան» շէնք, 4րդ յարկ, Շարքաթ, 11 եւ Կիրակի, 12 Յունուարին:

### ՄԱՃԱԶԴ

Տիկին Հռիփսիմէ Զէյթունյան

Տէր եւ տիկին Յարութ Զէյթունյան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Զարեհ Զէյթունյան

Տէր եւ տիկին Րաֆֆի Զէյթունյան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Յովհաննէս Գալայեան եւ զաւակունք

Գալայեան ընտանիք Դարբինեան ընտանիք Ուրիկեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, քեռայրին եւ հարազատին

### ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹՈՒՆԵԱՆԻ (Ծնեալ՝ 1922ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 9 Յունուար 2003, առաւօտեան ժամը 5:00ին:

Թաղման պաշտամունքը կատարուեցաւ Հինգշաբթի, 9 Յունուար 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարտի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յուանկցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Նիւ ժոնէյտէ, «Հըքմէ» փողոց, «Սեւան» շէնք, 9րդ յարկ, Ուրբաթ 10 եւ Շարքաթ 11 Յունուարին:

### ՄԱՃԱԶԴ

Տիկին Ազնիւ Չոլաքեան

Տէր եւ տիկին Վազգէն եւ Հուրի Ղուկասեան եւ զաւակը

Տէր եւ տիկին Կարպիս եւ Մարալ Մխճեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Անթուան եւ Թամար Ժորժ եւ զաւակունք

Տէր եւ տիկին Արրահամ եւ Զապէլ Թոսուսեան

Տէր եւ տիկին Սեդրակ եւ Անի Թոսուսեան

Տէր եւ տիկին Շահան եւ Մարո Սուքիասեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին տոբթ. Շահէ եւ Մովսիկ Մաճուսեան եւ զաւակունք

Օրիորդ Շաբէ Չոլաքեան եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօրեղբոր, քեռայրին եւ հարազատին

### ՆԵՐՍԷՍ ՉՈՒԱԶԵԱՆԻ (Ծնեալ՝ 1928ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 8 Յունուար 2003ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 9 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Առաւայիկ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
- Յուանկցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Կարպիս Մխճեանի բնակարանը, Պայտա «Ալ-լէ տը Փէն» փողոց, «Բյոտ Մարեպ» շէնք, 3րդ յարկ Ուրբաթ, 10 Յունուարին եւ տէր եւ տիկին Արրահամ Թոսուսեանի բնակարանը, Ամանու, «Մակի Հաթ» փողոց, Կալէրի Յուսուրդի դիմացի շէնք, 5րդ յարկ Շարքաթ, 11 Յունուարին:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐԳՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ ՑՅՈՒԱԾ ԵՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ'ԸՍԵ ԶԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քըրայթի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէն, որ վարչապետին հետ քննարկեց Հարիրիի Փարիզ կատարած վերջին այցելութեան արդիւնքները, Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաքի եւ Դրամական Միջազգային Ֆոնտի ընդհանուր տնօրէնին հետ անոր ընդունեցած հանդիպումներուն լոյսին տակ:

Հանդիպումին ետք Լը Քուրթիէ յայտնեց, որ վարչապետ Հարիրիի հաւաստած է, թէ «Փարիզ - 2» ժողովին որոշումները արդէն իսկ սկսած են գործադրուիլ: Վարչապետ Հարիրի նշեց, որ խոստացած զուճարները արդէն իսկ սկսած են անհրաժեշտ է, որ կառավարութիւնը հսկէ 2003ի պետական պիտուէի նախագիծին վաւերացման: Հարիրի ընդունեց նաեւ չինական տնտեսական պատւիրակութիւնը մը, չինական արտաքին առևտուրի եւ ճարտարաւոյտի գրասենեակի նախագահին գլխավորութեամբ: Ներկայ գտնուեցաւ նաեւ Լիբանանի առևտուրի գրասենեակի նախագահ Ատան Քասար եւ Լիբանանի մէջ Չինաստանի դեսպան Լիու Կրսիան Կուս:

Հանդիպումին ետք յստակացաւ, որ կառավարութիւնը կը քաջալերէ չինական ներդրումներուն յաւելումը Լիբանանի մէջ: Վարչապետ Հարիրիի այցելեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի նախկին օգնական Ռիչըրտ Մըրֆի: Քննարկուիլ առարկայ դարձան տնտեսութեան ներկայ կացութիւնը եւ վայել բարելաւելու հեռանկարները: Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրուսիւն, Միջազգային Կարմիր խաչի նախագահ Հենրի Ֆուրնիէն, ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Մարուան Չէյնը եւ Լիբանանի մէջ Եմէնի դեսպան Ապտալլա Պաշան:

### ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԻԼԻ...

Շարունակում Ա. ԷջԵԳ

յայտէ ներքին եւ արտաքին ապահովութեան հարցերու մասին:

Թրքականներուն հապուղիքայ բացատրութեամբ մը, Օպոք ըսած է, թէ իսլամական ծայր քայլի դիմած է թիւրքիոյ պշխարհիկ կարգերու դրոշման սպառնացող մեծագոյն վտանգներն մէկն է, ինչ որ կ'արդարացնէ բանակին տարեկան մաքրակազմումը՝ կիւնտրականներու, որոնք, ըստ անոր յանցանքը են իսլամական գործունէութեամբ:

Մնացեալ շարք, Թուրքիոյ կիւնտրական գերագոյն խորհուրդը 7 սպաներ պաշտօնապահած է իսլամական գործունէութեան յանցանքով: Նման մաքրագործումներու պարագային «պաշտպանութեան գործընթացներ» իսլամական թափանցումներուն դէմ, բացատրած է անի ըսելով, թէ վարչապետ Ապտիլըլ Վիլի չիստրագրած է, սակայն գրաւոր վերապահութիւն մը աւելցուցած է՝ յայտնելով, որ իր կառավարութիւնը ճիշդ պիտի տանի օրէնքը բարեփոխելու, որպէսզի արտաքսուած վիտորները կարենան առարկել իրենց դէմ արձակուած վճիռին:

Օպոք ըսած է, որ Կիլի ծրագրում քայլը «օրինական հիմնարկուն չունի» եւ «հակառակ է վարչակարգին պատասխանատուութեան», ինչ կը վերաբերի երկրին օրէնքներուն պաշտպանութեան: Ան նաեւ յարձակողականի դիմած է ԱՔՓի դէմ, որ կ'ուզէ վերտալ կիւնտրուող մէջ յաշակ կրելու արգելքին: «Պէտք չէ ալիկայուի մեզմէ, որ հանդուրժենք յաշակի գործածութիւնը՝ իբրեւ քաղաքական խորհրդանիշ, հանրապետական արժէքները մաշեցնելու համար», յայտնած է ան:

### 10 ՅՈՒՆԻՍԻՆ - 16 ՅՈՒՆԻՍԻՆ 2003

## ԵՐԿԻՐ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ԵՐԿԻՐ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Էջ 4.- «Քաղաքական պայքար՝ հանդուրժողական սահմաններում». գրոյ՝ Հայաստանի Ազգային ժողովի Գ. Չ. Դ. պատգամաւորական խմբակցութեան ներկայացուցիչ Աղուան Վարդանեանի հետ:

Էջ 7.- «Լոպիզի անխուսափելի թիրախները» տնտեսական միջոցով յոյուսած կ'անդրադառնայ այն երեւոյթին, որ Հայաստանի մէջ առայժմ չկան իշխանութեան եւ պիզնէսի յարաբերութիւններու կարգաւորման իրաւական մեքանիզմներ:

Էջ 8.- «Փշատերեւ անտառն այս տարի փրկուեց». «Երկիր»ի ընկերային բաժնու տրուած այս հրապարակումին մէջ կը խօսուի հայրենի բնութեան պաշտպանութեան գծով ձեռք առնուած նախաձեռնութիւններու մասին:

Էջ 11.- «Երկիր»ի այս թիւին մէջ կը կարդանք խամաճիկներու թատրոնին մասին մշակութային միջոցով յոյուսած մը՝ «Երեանի ամենաիմքնատիպ թատրոնները մէկը» խորագիրով:

Էջ 13.- «Փոքր եղբորը հետ» յոյուսած կ'անդրադառնայ Թուրքիոյ Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութեան ղեկավար Ռեճեփ Թայյիփ Էրտողանի Ազգային այցելութեան: «Երկիր»ի այս տարուան առաջին թիւով նաեւ կը ծանուցուի, որ 17 Յունուարին Երեւանի «Մսկու» շարժապատկերի սրահին մէջ տեղի պիտի ունենայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 112ամեակի տօնակատարութիւնը:

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ «ՀԱՆԴԱՐՏ» ԺՈՂՈՎ

Կառավարութիւնը երէկ երեկոյեան Թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեք 2003ի իր առաջին ժողովը, նախագահութեամբ Կոր. Էմիլ Լաիտոնի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովին բացակայեցաւ Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս:

Նիստէն առաջ նախագահ Լաիտոն եւ վարչապետ Հարիրի ղոնփակ հանդիպում մը չունեցան, սակայն հակառակ անցեալ շաբթուան ընթացքին Նիւ Յիւ. Վի.ի հարցով ծագած լարուածութեան, նախագահ Լաիտոն եւ վարչապետ Հարիրի ձեռնուեցան իրարու հետ եւ հանդարտ մթնոլորտի մէջ փոխանակեցին կարծիքներ եւ քննարկեցին ժողովին օրակարգը:

Լաիտոնեղեակ աղբիւրներ ժողովէն առաջ նշեցին, որ տեղեկատուութեան ապատրուստներու կաշկանդումին առնչուած թղթածրարը պիտի չքննարկուի: Անոնք նաեւ նախատեսեցին, որ ՄԱԿի մէջ Լիբանանի դեսպանի պաշտօնը վարէ Սամի Քուրունֆոյ, Իտալիոյ մէջ՝ Ռեմոն Ռուֆայի եւ Պերսիի մէջ՝ Հիւսաւ Տիւսալքի:

Նախատեսուեցաւ նաեւ, որ կառավարութիւնը վաւերացնէ բոլորային հեռաձայնի արտօնագիրներուն առնչութեամբ պատրաստուած թղթածրարը:

Ժողովի արարտէն ետք, տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի յայտարարեց, որ վերոյիշեալ բոլոր հարցերը քննարկուած են (բացի տեղեկատուութեան կապուած թղթածրարէն) սակայն անոնց առնչուած ոչ մէկ օրէնքի նախագիծ վաւերացուած է:

Արիտի յայտնեց, որ ժողովի ընթացքին նախագահ Լաիտոն բազմիցս շեշտած է, թէ կառավարութիւնը ներկայ կապումով պիտի շարունակէ գործունէութիւնը՝ աւելցնելով, որ ներկայ շրջանին կառավարութեան անդամներու որեւէ փոփոխութիւն չի նախատեսուիր:

### ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ԹԵԿՆԱԾՈՒ ...

Շարունակում Ա. ԷջԵԳ

եւ ինք քաղաքացիութիւն ստացած է միայն Օգոստոս 2001ին:

Երէկուան նիստին, Հայաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչ Արտաշէս Կակոյեան ընդգծեց, որ Յովհաննէսեանի պահանջը անընդունելի է, որովհետեւ ան իր դիմումը օրին պէտք էր ներկայացնէր ներքին կամ արտաքին գործոց նախարարութիւններուն, սակայն ան այդ քայլին չէ դիմած, եւ նշեալ նախարարութիւններուն մօտ Յովհաննէսեանի դիմումի փաստաթուղթերը չկան:

Նախագահի լիազօր ներկայացուցիչը նաեւ ընդգծեց, թէ Յովհաննէսեան միայն 1996ին եւ 1997ին ընդունուած կարգով ներկայացուցած է իր դիմումը, սակայն օրին չէ հրատարած իր միջ. ամերիկեան քաղաքացիութեան օրէնքով: Ան միայն 23 Ապրիլ 2001ին հրատարած է ամերիկեան հպատակութեան:

Լսելով կողմերուն եւ անոնց ներկայացուցած փաստարկները՝ դատարանը, դատաւոր Մարո Արամեանի նախագահութեամբ, որոշեց մերժել Յովհաննէսեանի առաջարկը:

● ՓԵՏՐՈՒՄ 19ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն առնչութեամբ Հայաստանի Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովը հրաւերներ ուղղած է միջազգային բազմաթիւ կազմակերպութիւններու եւ պետութիւններու համապատասխան մարմիններուն՝ ընտրութիւններուն հետեղող պատուիրակութիւններ ուղարկելու առաջարկով:

Ցարդ հրաւերներ ուղղուած են Հունգարիոյ, Թուրքիոյ, Պուլկարիոյ, Նորուեթիոյ, Լեհաստանի, Լատվիոյ Կեդրոնական Ընտրական յանձնաժողովներու նախագահներուն, ԵԱՀԿի ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդկային իրաւանց գրասենեակին, Եւրոպական Նորհուրդին:

### ԴՏԱՐԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՒՏԻՆ

- Դալիթ Սեփեճեանի մահուան առիթով, Տեր եւ տիկին Գարո Սահակեան 50,000 Լ. յ. Տեր եւ տիկին Գեորգ Կալեպեան 50,000 Լ. յ. Տիկին Ալիս Կալեպեան 50,000 Լ. յ.

### Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ - ՀԱՅԱՍՏԻՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Այն ազգայինները, որոնք կը փափաքին մատաղցու ուշիար նուիրել կամ փոխան մատաղցու նուիրատուութիւն կատարել, թող բարեհաճին հեռաձայնել թաղականութեան գրասենեակ, հետեւեալ թիւերուն՝ 01-328474 եւ 03-538866: Մատաղցու ուշիարները եկեղեցի պէտք է հասն ըլլան մինչեւ Ուրբաթ, 10 Յունուար 2003, կէսօրէ առաջ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- Այսու կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ 2003ի Ս. Ծննդեան տօնօրինեցի օրհնաբաշխ առաքելութեամբ կարգ մը շրջաններ պիտի այցելուեն հետեւեալ բաժանային հայրերը.
1. Լեւոնային շրջաններ՝ Ս. Նարեկ քիմ. Լեւոնեան
  2. Չալքայի ծովեզերայ շրջան՝ Ս. Սկրտիչ քիմ. Էլիշեան
  3. Եղիան՝ Ս. Օշական Ա. քիմ. Աշոգեան
  4. Ռաուտայի ծխային մնացեալ շրջանը՝ Ս. Սեւակ քիմ. Կասիլեան
  5. Լեյլաւան՝ Ս. Գուրգեն քիմ. Յովհաննէսեան



ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ







# 7րդ Արուեստ



## 2003ի ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՏԱՐԻՆ ԻՆՉ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՏԱԼ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՆ



Շարժապատկերի ճարտարարուեստը 2002ի ընթացքին փաստեց, որ եկած է մեծ արտադրություններով և արդեն իսկ ներկայումս յարձուգվում է ձեռք ձգած ժապավեններով հանդիսատեսներին գանգոլածներ «որսալու» ժամանակաշրջանը: Շարժապատկերի մարզի

մասնագետները երբևիցե անհատներ կը նախատեսեն, որ 2003ը աւելի է կառավարվել այս հասանքին տիրապետությունը: Ըստ «Տի էքզոնիսթ» շարժապատկերին, 2003ը պիտի ըլլայ այն տարին, որ անցնող տասնամեակին որեւէ ժամանակ աւելի, շարժապատկերի սրահները պիտի ներգրավէ ամերիկացիները և որ 2003ի ընթացքին շարժապատկերի հանդիսատեսները պիտի դիտեն նախորդ տարիներէն նուազ թիւով ժապավեններ: Պատճառը ամերիկացիները եւ եւրոպացիները պիտի հմայուեն հոլիվուդական մեծ արտադրություններով: Շարժապատկերի գանգոլածարտի արտադրությունները խոստացող տարուան մը ընթացքին «Տը Մէյթթրիք» մէկի փոխարէն եր-

կու անգամ պիտի վերադառնայ մեծ պատու («Տը Մէյթթրիք» ռիթմը) Մայիսին, եւ «Տը Մէյթթրիք» Ռեյնոլդսը: Իսկ անոր ընկերացող «Մարվըլ քոմիքս» Տի էքզոնիսթի «Էքս 2»-ի, «Տէյթթրիք»-ի եւ «Տը հալք»-ի նոր տարբերակին հրապարակումները նոյնպէս ազդանշանը պիտի տան տոմսակներու վաճառքի միլիոններու հնձումին: Կը նախատեսուի, որ 2003ի ընթացքին այս վերջին երեք ժապավեններուն ապահոված մուտքը միասնաբար անցնի մէկ միլիոն տոյարի սահմանը: 2003ի շարժապատկերի աշխարհը իր երկրպագուներուն պիտի մատուցէ շարունակական ժապավեններու նախորդ տարիներէն շատ աւելի երկար շարք մը: Թուելու համար նշենք «Չարլիզ Էյնջելզ 2», «Լիկըլի պլոնտ», «Լարա Բրոքթիթմայ Ռէյնոլդս», «Տը թրիլիվուտեան մեծ արտադրությունները», «Տը Ֆիլիպինոս տը ֆիլիպինոս» եւ ուրիշներ: Ըստ քննադատներուն, 2003ի մեծագոյն արտադրությունը կը նկատուի «Տը լորտ աֆ



տը ռինկո»-ի շարքին երրորդը՝ «Տը լորտ աֆ տը ռինկո» տը ռիթմըն աֆ տը քինկ» ժապավենը: Այս երեւոյթը կը բացատրուի անով, որ նկատի առած արտադրությունները բարձր սակերը, որոնց առիւծի բաժինը կ'ուղղուի ժապավենին որոշ վարկ ապահովող նշանաւոր դերասաններու, հարիւր միլիոն տոնալարի մուտք ունեցող հոլիվուդեան ժապավենները դադար են շահաբեր արտադրություններ նկատուելի: Հետեւաբար արտադրիչ ընկերություններ իրենց գրաւը կը դնեն ներկայումս ապահովություններ իրենց գործընկերներին: Քննադատելով շարունակական ժապավեններու միջոցով եկամուտ ապահովելու եւ նշանաւոր դերասաններ անգործ չզգնելու երեւոյթը՝ «Տը թրիլիվուտեան շարժապատկերները կը գրէ. «Ո՞վ ըստ, որ ժապավենները անպայմանօրէն պէտք է բան մը պէտք է փոխանցեն հանդիսատեսներուն: Աւելի կարելու կը նկատուի, որ անոնք դրական փոփոխություններ չառաջացնեն շարժապատկերի շուկային մէջ»: Սակայն «Տը թրիլիվուտեան» շարժապատկերները, կը նշէ շարժապատկերի:

### Նոր Ժապավեններ

Մինչ «Վերի Փոքր Էնտ տը չէյմպըր աֆ սիքրքթ»-ի, «Տայ Էնտոր տէյ»-ի եւ «Կեճկ աֆ Նի Եորք»-ի մեծ շարժապատկերի մեծ եւ տպաւորիչ արտադրություններ կը շարունակեն գրաւել լիբանանցի հանդիսատեսին ու շարունակեն, լիբանանցի շարժապատկերի սրահներ կը յամենան յիշատակութեան արժանի նոր ժապավեններ մատուցել հանրութեան եւ կը բաւականաճան շարժապատկերութեան ներկայացնելով մէկ-երկու միջակ-տկար ժապավեններ: Ստորեւ կը ներկայացնենք շարժապատկերի սրահներուն մատուցած ժապավենները:

#### «ԱՅ ՍՓԱՅ»




1960ական քուակաճներու հետատեսիլային նոյնանուն շարքէն ներշնչուած «Այ սփայ» ժապավենը բազմաթիւ առումներով կը յիշեցնէ անցնող տարուան ընթացքին հրապարակուած «Տոբայմ» եւ «Էքս Էքս Էքս» ժապավենները: Ժապավենը կը ներկայացնէ լրտեսական գաղտնի գործով երոպա ուղեւորուող երիտասարդ եւ կարող լրտես Ալեքս Սքաթը (Օուէն Ուիլսոն), որ սակայն կը տառապի իր սպարեզին մէջ ստորադաս ըլլալու բարդոյթէն: Ան պէտք է Հուկարիոյ մէջ կասեցնէ Միացեալ Նահանգներէն գոյցաւորուած զինուորական գերադիական օդանաւ մը, որ ունի շրջապատող գոյցներուն հետ նոյնանուն առաւելութիւնը (յիշենք 007ի ինքնաշարժը): Եր առաքելութիւնը յաջող կերպով իրականացնելու համար Ալեքսը կ'ընկերանայ նարիսականութիւն մարմնաւորող բուքսմարտիկ Քելի Ռոպինսոն (Էտի Մըրֆի): Ան պատուոյ տողանցներու արժանանալու համար պատրաստ է կատարելու մեծ ինչ, թէկուզ իր լրտես բարեկամին ծրագիրներուն վնասելու գնով: Շարք մը արկածախնդրութիւններ ներկայացնող այս ժապավենը, հակառակ իր լրտեսական եւ երգիծական բնոյթին, չի յաջողիր ըլլալ ինքնատիպ գործ մը:

#### «ՏԵ ԲՐՕ. ՍԵԼՎԵՅՇԸՆ»

Բեմադրիչ՝ Պիարաք Նալուրի  
«Տը քրօ» ժապավեններու շարքին երրորդն է այս մէկը՝ արտադրուած 2000ին: Ալեքս Քորվիս (Էրիք Մայիլս), որ ընկերութիւն սպաննելու յանցանքով մահապատիժի ենթարկուած էր, մահուան աշխարհէն ետ կը բերելի ազուի մը եւ առասպելի մը միջոցով: Իր նոր գոյութեան ընթացքին հերոսը կ'անդրադառնայ, որ ոստիկանական փտած ուժեր կը կանգնին իր ընկերութիւնը սպանութեան ետին: Անոր նպատակը կ'ըլլայ մեծ գնով բացայայտել իրականութիւնը, բայց յաջողութեան նախապայմաններէն մէկն է լուծել ոնիրին սկզբնական պատճառին գաղտնիքը:

#### «ԲԵԼԻՆԿ ՄԻ ՍՈՅՈՒԼԻ»

Բեմադրիչ՝ Քելյ Զէն  
Նշանաւոր լեռնագնացի մը (ձորք Ֆինն) եւ երիտասարդուհի մը (Հիթըր Կրեհեմ) միջեւ յանկարծակիօրէն սկսող սիրային յարաբերութիւնը շուտով կը յանգի ամուսնութեան, սակայն երիտասարդուհին կ'անդրադառնայ, որ իր ամուսինը իր ետին ունի մութ անցեալ մը: Օրէ օր կը յայտնաբերուին նախկին սիրուհիներու անհետացումներուն եւ սպանութիւններուն հետքերը, եւ հերոս ու հիւսիս կ'անդրադառնայ, որ իր կեանքը փրկելու համար անհրաժեշտ է փախչիլ իր ամուսինէն: Անգլիական այս թրիլլը շատ բան չի խոստանար իր հանդիսատեսներուն:



### ԼԱՒԱԳՈՅՆ ՕՏԱՐ ԺԱՊԱՒԷՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅԱԾ 54 ԺԱՊԱՒԷՆՆԵՐ

«Օսքար»ներու թեկնածուներու ցանկին հրապարակման նախորդող շրջանին «Էքստրա»-ի աֆ մոդըն փիքչըր արթք է. նո սայընսը» ահագնիւ հրապարակած է օտար ժապավենի թեկնածուներու ցանկը: Նախորդ տարուան թիւին երեք ժապավենով աւելի եղող ցանկին մէջ առաջին անգամ ըլլալով մուտք գործած են Աֆրո-նիստանէն, Պանկատչէն եւ Չատչէն ժապավենները: Պաղեստինցիները աշխատանք տարած էին այս ցանկին մէջ ներառ-



**G. AYANIAN & SONS**  
Dora, (01)255222/3/4/5/6 - Genmaye, (01)447000-445396 - (03)627728/9  
Fax: (01)265167-582357; E-Mail: gasons@dm.net.lb  
www.ayanian.com

### ԺԱՊԱՒԷՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՍԵՓ ԵՐԸ, ՇԻՉ ՖՐԵՆՉ» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեք, Սըալլու 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի)
- «ԱՅ ՍՓԱՅ» (Ամփիր/Տիւն, Թաժ Կամրա, Եսփաս, Սոֆիլ, Սըալլու 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի)
- «ԿԵԼԿԶ ԱՅ ՆԻ ԵՈՐԸ» (Փլանք/Ապրաժ, Չուք, Զոնքորտ, Զալիք, Ֆրիուլ, Թրիփուլի, Ամփիր/Սոֆիլ)
- «ԲԵԼԻՆԿ ՄԻ ՍՈՅՈՒԼԻ» (Փլանք/Ապրաժ, Զոնքորտ, Չուք, Ֆրիուլ, Թրիփուլի)
- «Լ ՕՊԵՐԵՏ ԵՍՓԱՆՈՒԼ» (Ամփիր/Սոտեք, Սըալլու 2001)
  - «ԼԱՅԵ ՍԱՅԵ» (Ամփիր/Սեթ Էլի, Սոտեք, Սըալլու 2001, Կալաքսի)
  - «ՏԵ ԲՐՕ: ՍԵԼՎԵՅՇԸՆ» (Փլանք/Ապրաժ, Չուք, Զալիք, Զոնքորտ, Ֆրիուլ, Թրիփուլի)
- «ՎԵՐԻ ՓՈՐԹԸՐ ԵՆ ՏԵ ՉԵՅՄՈՐ ԱՅ ՍԻԲՐԵՑ» (Փլանք / Ապրաժ, Զոնքորտ, Ֆրիուլ, Չուք, Ամպաստ, Ամփիր/ Սոֆիլ)
- «ԼԵ ՓԵՐԹ ՓՈՒՍԵ» (Ամփիր, Կալաքսի)
  - «ՍՈՒԻԹ ԸՆՍ ԱԼՊԱՍԱ» (Փլանք/Ապրաժ, Զոնքորտ, Ֆրիուլ, Թրիփուլի)
  - «ՊԼՈՒ ԵՐԱՅ» (Փլանք / Ապրաժ, Չուք, Զոնքորտ, Ֆրիուլ, Թրիփուլի)
- «ՏԵ ՍԱՆԹԱ ԸԼՈՉ 2» (Փլանք / Ապրաժ, Չուք, Զոնքորտ, Ֆրիուլ)
- «ՍԵՍԵՐ ՊՈՒՆԶ» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սոտեք, Սըալլու 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի)
- «ՍԹԻԼ» (Ամփիր, Սըալլու 2001, Կալաքսի)
- «ՏԱՅ ԵՆԱՏԵՐ ՏԵՅ» (Ամփիր / Եսփաս, Տիւն, Սեթ Էլի, Թաժ Կամրա, Սոտեք, Սըալլու 2001, Կալաքսի, Լաւ Սալիմա, Սըարկէյք):
  - «ՍԵՐՎԻՆԿ ՍԵՐԱ» (Ամփիր / Տիւն, Եսփաս, Սոտեք, Սեթ Էլի, Սըալլու 2001, Կալաքսի)
  - «ՊԱԼԻՍԹԻԸ» (Փլանք / Ապրաժ, Զոնքորտ, Ֆրիուլ, Զալիք, Թրիփուլի)
  - «ՍՈՒՐԱՄԵՏ, ՏԵ ԼԱՍԹ ՓՐՈՅԵԹ» (Ամփիր / Տիւն, Թաժ Կամրա)
  - «ԹՐԵՐԸՐ ՓԼԱՍԵԹ» (Փլանք, Զոնքորտ, Ֆրիուլ, Թրիփուլի)
  - «ԱՆՏԵՐԸՐԱԿՈՐ ՊՐԱՏԸՐ» (Փլանք / Ապրաժ, Զոնքորտ, Ֆրիուլ, Թրիփուլի)
  - «ԼԱՍՍԱ ԸՇԵԹԸՐ ՍԱՐԻԱՍ» (Ամփիր/Սոտեք)
  - «ՈՒՏ ՏՐԵԿԸՆ» (Փլանք, Չուք)

••••• Գերազանց ••••• Չատ լա ••••• Լաւ ••••• Սիջակ ••••• Չենք յանձնարարքը ••••• Չենք դիտած

ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ՍՐԱՆՆԵՐՈՒՆ ԶԵՆԱՊԱՏԿԵՐԻ ԹԻՒԵՐԸ  
Եսփաս - 09/212516 - Սոտեք - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոֆիլ - 01/328806 - Քոնքորտ - 01/738439 - Ամպաստ - 09/226010 - Թաժ - Կամրա - 01/746214  
Ֆրիուլ - 01/485590 - Ապրաժ - 01/292192 - Զալիք - 09/912503 - Չուք - 09/221363 - Սըարկէյք - 08/813901 - Սեթ Էլի - 04/443992

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

Միջուկի Միջազանց

ԹՈՅԼ ՄԻ՛ՏԱՔ, ՈՐ ԱՆՑԵԱԼԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՈՒԻ

ՄԵՐ ԸՆԱԴԱՐԵԱՆ ՄՇԱԿՈՅԹՆԵՐԸ ԿՄԵՐՈՒՆ 21ՐԴ ԴԱՐՈՒ ԿԵԱՆԵԻ ԾԱՆՍԱԳՈՒՄՆԵՐՈՒՄ ՄԵՋ: ԻՆՉՊԻՍԻ՝ ԱՊԱԳԱՅ ՄԸ ԿԱՐԵԼԻ Է ՈՒՆԵԱԼ, ԵՐԲ ԶԵՆԵ ԿՐԵԱՐ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ ԿԵՐ ԱՆՑԵԱԼԸ: «ՏԸ ՖԻԻՉԸՐ ԱՅ ՏԸ ՓԱՍԹ» ԳԻՐԵԻՆ ԸՆԴԻՆԱԿ՝ ԱՆԵՄԱՆՍՐ ՍՈՒԼԻ ԿԸ ՎԵՐԼՈՒԻԵ: ԱՅՍ ԷՋԸ ԿԸ ԲՈՎԱՆՂԱԿԵ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ՏԸ ԹԱՅԱՏ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՆՈՐ ՅՕԴՈՒՄԵՆ ԲԱԺԻՆԵՐ

ԲԱԽՈՒՄԸ

ԱՇԽԱՐԻ ԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՐՍՏՈՒԹԵԱՄ ՅԱՏԿԱՆՉՈՒՄ ԿԵՐՈՆՆԵՐԸ ՆԱԵՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՅԼԱՇԱՆՈՒԹԱՆ ԳԱՆՉԱՐԱՆՆԵՐ ԵՆ, ՈՐՈՆՔ ՍԱԿԱՅ ԿԸ ԳՏՈՒԻՆ ԱՆԵՏԱՆԱԼՈՒ ՄԵՍԻՆ: ԴԵՊԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՆ ԱՆՑՈՒՄԸ ԿԸ ՅԱՋՈՂԻ, ԵՐԲ ԸՄԱՔԱԿԱՆՈՒԹԻՆ ՍԸ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ՊՐԻՍՄԱԿԵՆ ԿԱՆՑՁԵ ԶԱՅՆ

Անցեալի ապագային մասին մտածելը կրնայ արխիւագէտներու եւ թանգարանի պատասխանատուներու յատուկ խորհրդաւոր եւ դատարկ գործ մը թուել: Ի վերջոյ, կարգ մը իմաստասէրներու եւ բնագէտներու համաձայն, անցեալ գոյուցիւն չունի, այլ միայն՝ ներկայ: Իրօք, ինչ որ անցեալ կը համարենք, հին կոթողներու եւ իրերու մնացորդներն են, որոնք գոյուցիւն ունին ներկային մէջ, յաճախ շատ տարբեր՝ իրենց սկզբնական ձեւէն: Կիզէի Սֆինքսը, որուն խստադէմ գեղեցկութեան վրայ կը հիանանք այսօր, ժամանակին ներկուած էր վառ գոյններով, ինչ որ պնդուած եւ անճշակ պիտի թուէր մեզի: Անցեալի մասին մեր կարծիքները անխուսափելիօրէն կոտորակուած են եւ շատ կողմնակալ. անոնք նոյնքան կ'արտացոլեն ներկայի կարիքները, որքան՝ անցեալի: Այսուհանդերձ Համաշխարհային Առեւտրի Կեդրոնի վրայ Սեպտեմբեր 11ի յարձակումը եւ Աֆղանիստանի մէջ Պուտտայի վիթխարի արձաններուն քանդումը յստակօրէն ցոյց կու տան, թէ մշակութային պատկանելիութեան եւ յիշողութեան հարցերը սոսկ ակադեմական նիւթեր չեն: Ուսումնական Լատինի նման իսլամ արժանատիներու գայրոյթը մասամբ արդիւնք է առանց ինքնուձեռն կորսնցնելու՝ դէպի արդիականութիւն անցնելու կատարելու անկողնային անադական հաւաքակազմութեան մը պրոթիւստանտ: Յետապագայատեքագմեան համաշխարհայնացած աշխարհին մէջ, ուր համասեռութեան ուժերը հզօր են ու անհաճման, նոյնիսկ Բրիտանիոյ եւ Յրանսիոյ նման հարուստ երկիրներ, որոնք վերջին դարերուն միշտ «յաղագրական» եղած են, այսօր մտահոգ են մշակութային ինքնուրոյնութեան պահպանումով: Բրիտանիոյ մէջ, ինչպէս իւրաքանչիւր անգլիացի գիտէ, եւրոն որդեգրելու հարցը շատ աւելին է, քան՝ դրամական եւ տնտեսական քաղաքականութիւն մը: Անիկա կը մղէ, որ երկիր մը իր դիրքը վերատեսուցութեան ենթարկէ իր պատմութեան նկատմամբ, վերստին ընորոշելով, թէ ինչ կը նշանակէ բրիտանացի եւ եւրոպացի ըլլալ:

տառացիօրէն կը գործադրեն եւ կը փորձեն իսլամութիւնը վերադարձնել իր սկզբնական մաքրամաքուր, առասպելական վիճակին, Մոհամեմմեդի հետեւորդ 4 խալիֆաներուն պարտադրած բիւրեղութեան, բուռն կերպով կ'ընդդիմանան պատկերներու պաշտամունքին եւ ծրագրուած կերպով կը ձգտին փճացընել աւելի ուշ յայտնուած իսլամական քաղաքակրթութիւններու արուեստն ու ճարտարապետութիւնը: Անոնք գետնին հաւասարեցուցած են Մեքքէի եւ Մետինէի պատմական քաղաքները, քանդած են Մոհամեմմեդի առաջին հետեւորդներուն դամբարանները, ինչպէս նաեւ՝ քաղաքներու պատմական ճարտարապետութիւնը: Վերջերս անոնք քանդեցին օսմանեան պարսպ մը Մեքքէի մէջ:

Նոյնը պատահեցաւ նախկին Եռևկուսլաւիոյ մէջ, գրեթէ առանց միջազգային հակազդեցութեան: Պոսնիոյ եւ Քրոսովոյի վերանորոգման համար միջազգային չնչին օգնութիւն տրամադրուեցաւ: Մէնտական Արաբիա միակն էր, որ օգնելու կամեցողութիւն ցուցարեց, եւ իբրեւ պայման՝ պահանջեց, որ օսմանեան տապանաբարբեր փճացուին եւ մզկիթներուն զարկուտին պատերը ներկուին:

Միլոշեւիչ եւ ուսահայիները փորձած են փճացնել նոյն բաները. իսլամական քաղաքակրթութեան 1000 տարուան պատմութիւն մը, որուն ընթացքին իսլամներ, կաթոլիկ եւ ուղղափառ քրիստոնեաներ համեմատական համերաշխութեան մէջ գոյակցած են: Այս պատմութեան հարուստ արձանագրութիւնը կը բարդացնէ սերպ ազգայնականութիւն եւ իսլամ արժանատիներով համարուող պարզ քաղաքաբանութիւնը, զոր երկուքն ալ պիտի ուզէին վերածել իսլամութեան եւ Արեւմուտքի միջեւ սեւ ու ճերմակ պայքարի մը:

Աշխարհի զանազան վայրերուն մէջ շուրջ 6500 լեզուներ կը խօսուին. անոնցմէ ոմանք՝ միայն քանի մը տարեցներու կողմէ: Կը նախատեսուի, որ յառաջիկայ 100 տարիներուն այս լեզուներուն կէսը անհետացած ըլլայ: Այսօր աւելի մեծ ուշադրութեամբ կ'ուսումնասիրենք եւ կը յարգենք մեկուսացած եւ աւանդական այն հազարաւոր մշակոյթները, որոնք «վայրենի» կամ «նախնական» պիտակով խարանուած էին տակաւին 20 կամ 30 տարի առաջ, սակայն որոնց մեծամասնութիւնը անխուսափելիօրէն պիտի ձուլուի տիրապետող մշակոյթներու մէջ, եւ որոնց լեզուները պիտի փոխարինուին գլխաւոր լեզուով մը, ինչպէս՝ անգլերէն, չինարէն, սպաներէն եւ հին-տի:

Չենք կրնար ողբալ այս կորուստը, որովհետեւ անիկա կրնայ առիթ մը ըլլալ, որ տըւեալ մշակոյթները օգտուին աւելի ընդարձակ աշխարհի մը ընձեռած կարելիութիւններէն: Սակայն նաեւ գիտենք, թէ անհետացող իւրաքանչիւր լեզուի հետ կը կորսուի աշխարհայնացած մը: Հիւսիսային Ամերիկայի այլոնքուրէն ցեղախումբին լեզուներուն մէջ գոյականները բավական եւ իրական դասաւորումներու չեն արժանուած, ինչպէս՝ ուսմանական բազմաթիւ լեզուներու մէջ, այլ՝ «չնշաւոր» կամ «անշունչ» դասաւորումներու: Նման կառուցի մը վրայ հիմնուած լեզու մը խօսիլ կը նշանակէ աշխարհը դիտել տարբեր ուսմանակով: Անհետացող բնութեան եւ կորստեան սեմին գտնուող մշակոյթներու միջեւ խոր կապ մը կայ. աշխարհի այն շրջաններուն մէջ, ուր կենսաբանական հարստութեան համեմատութիւնը իր գազաթնակէտին վրայ կը գտնուի, լեզուական եւ մշակութային այլազանութիւնը ամէնէն աւելի հարուստ է:

Այս ներհուս կապին կը գիտակցին նման հաւաքականութիւններու մէջ ապրողները: Հնդկաստանի վարանասի շրջանին մէջ Գանդպէս գետին փրկութեան ձեռնարկած անձը՝ Վ.Պ. Միշրա տեղւոյն տաճարին առաջնորդն է, միաժամանակ՝ ջրաբաշխական ճարտարագիտութեան դասախօս մը: Գետը մաքրելու անոր մտասեւեռումը մասամբ կու գայ անոր շուրջ

հազարամեակներու ընթացքին արժատացած, սակայն գետին հետզհետէ վատթարացող ապականութեան պատճառով կորստեան դատարարուած կրօնական աւանդութիւնները պահպանելու մղումէն: Իբրեւ նուիրեալ հին-սու մը, որ Գանդպէսը կը նկատէ անարատ եւ մաքրագոյտ սրբազան աստուածուհի մը, Միշրա կը փափաքէ ամէն օր լողանալ գետին ջրերուն մէջ, սակայն, երբ իբրեւ ճարտարագէտ կը չափէ ջրերին ախտածին նիւթերուն համեմատութիւնը, կը գիտակցի, թէ որքան վտանգաւոր է իր փափաքին գոհացում տալը:

«Պայքար եւ փոթորիկ կայ հոգիս մէջ, կ'ըսէ Միշրա»- կ'ուզէ սրբազան լոգանք մը ստաննի, որուն կարիքը կը զգամ ապրելու համար: Չեմ կրնար օրը սկսիլ առանց սրբազան լոգանքի: Սակայն միաժամանակ գիտեմ, թէ գետին ջրերը լաւ վիճակի մէջ չեն: Գիտեմ՝ ինչ կը նշանակէ կենսաքիմիական թթուածինի պահանջը, գիտեմ նաեւ, թէ ինչ է աղտը», կ'ըսէ ան՝ ակնարկելով ջրերին ապականութեան: Միշրա բոլորէն աւելի կը հասկնայ, թէ բնութեան աւերումը նաեւ մշակութային հարց է: «Ոնդրեմ»՝ գանոնք նկատեցէք վտանգուած արարածներ. այն մարդիկը, որոնք գետին հետ ապրող կապ մը ունին», կ'ըսէ ան:

Գանդպէսի ապականութեան հարցին մէջ կը խտանայ այսօրուան աշխարհին հիմնական բախումը՝ մէկ կողմէ բարեխառն երեսներ, նիւթեղէն հասցուցութեան եւ արեւմտեան գիտելիքներ իւրացնելու ձգտումին, միւս կողմէ՝ մշակութային արժէքները պահպանելու նախաձեռնարկութեան միջեւ: Այս է մեր ժամանակներու գլխաւոր թարաւորը:

Արարական աշխարհին մէջ ասիկա չափազանց դժուար հարց մըն է եւ իսլամ արժատականներուն գաղտնի կորիզը կը կազմէ: Այս պատճառով անտուք պատկերասփիւռի գործիքներ կը ջարդեն եւ կը յարձակին արեւմտեան ընկերութեան խորհրդանիշներու վրայ, ինչպէս՝ Համաշխարհային Առեւտրուրի կեդրոնը:

Բարբախտաբար, իրենց կարեւորութեան

Շար.ը՝ էջ 8

«ԱՆՑԵԱԼ ԵՒ ԹՈՅՆԻՍԿ ԱՆՑԵԱԼ ԶԷ»

ՄԻՆՉԵՒ 19Դ ԴԱՐ ԿԵԱՆՔԸ ԸՄՏԵՄԱՏԱԲԱՐ ՆՈՅՆ ԿԵՈՒՅՈՒԿ ԿԸՆՍԱՆԱՐ: ԱՅՍՕՐ ՓՈՓՈՒՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԱՓԸ ԸԵՏՂԵՏԵ ԿԱՐԱԳԱՆԱՅ, ՏԵՐԵԿԱՏՈՒԿԱՆ ԱՐԵՏԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՆԵՐՍՈՒԾԵՆ ԱՄԵՆ ՏԵՂ՝ ԱԵԼԻ ԵՄ ՇԵՃՏԵԼՈՎ ԱՆՑԵԱԼԻՆ ԸԵՏ ԿԱՊԻ ՍԸ ԿՈՐՈՒՄՏԻՆ ԿՏԱՆԳԸ

Իրօք, յատկանշական երեւոյթ է, որ նորագոյն անցեալին քաղաքական ամէնէն սարսափելի շարժումները անողոք պատերազմներ մղած են յիշողութեան դէմ: Երբ նացիները զբաղած էին հրեաները բնաջնջելով, անոնք կ'ըսէին. «Ո՞վ այսօր կը յիշէ հայերու նախնայինը»՝ ակնարկելով թուրքերու կողմէ 20րդ դարու սկիզբը ի գործ դրուած ջարդերուն: Գերանազգիք իրենց լաւագոյնը ըրած են ջնջելու համար իրենց ոճիւրներուն հետքերը, սակայն հեղանակներէն անոնց արխիւ պահելու բնագոյր յաղթած է իրենց, եւ արձանագրութիւն պահելու անոնց գերագանց բժախնդրութիւնը վաւերական անգուցական հարստութիւն մը կ'ընձեռէ նացիական պետութեան արարեցնելու վերաբերեալ:

Հաւաքականութիւններ, որոնք չեն յաջողիր դիմակայել իրենց անցեալը, կը թուի, թէ մարդոց նման կը հիւանդանան: Անցեալը անգոյ բան մը է եւ չափանց զօրաւոր՝ իբրեւ այդպիսին: Ինչպէս Ուիլիամ Ֆոլքերը գրած է՝ «Անցեալը չէ մեռած, անիկա նոյնիսկ անցեալն է»:

Յիշողութեան պահպանումի հարցերը իրենք գիբենք կը պարտադրեն մեր վրայ, աշխարհի սրբնթաց փոփոխութեան պատճառով: Անշուշտ փոփոխութիւնը միշտ բնական երեւոյթ մը եղած է մարդկային պատմութեան մէջ: Երկրագործական յեղափոխութիւնը, որ որսորդ-հաւաքողներու եւ հովիւներու վաշխտուն կեանքը փոխարինեց առաջին քաղաքներով եւ կայսրութիւններով, մարդկային կեանքին մէջ շատ աւելի խոր փոփոխութիւն յառաջացուց, քան՝ տեղեկատուական յեղափոխութիւնը, ինչպէս կ'ըսեն ոմանք: Մեծն Ադեքաստը եւ մակեդոնացի յոյները զբաւեցին Եգիպտոսը: Հռոմէացիք իրենց հերթին իրենց ենթարկեցին յոյները: Լատիններէնք փոխարինեց յունարէնը ամբողջ Միջերկրականի տարածքին, եւ այժմ անգլերէնը համացանցի գերիշխող լեզուն է: Արդեօք կորուստի մեր զգացողութիւնը պարզապէս այն կարօտա՞խտն է, զոր իւրաքանչիւր սերունդ կը զգայ իր անմիջական անցեալին նկատմամբ: Փոփոխութեան համեմատութիւնը ուշագրաւ կերպով արագացած է վերջին 200 տարիներուն եւ կը շարունակէ արագանալ մեր ժամանակներուն: Կեանքի կարգ մը հիմնական երեւոյթներ որոշ չափով անփոփոխ մնացած էին հնա-որդեան ժամանակներէն մինչեւ 19րդ դար: Յ.Ք. առաջին դարուն 20 օր կը տեւէր Լիբանանէն կամ այժմու Թուրքիոյ մէջ Հռոմէական կայսրութեան մէկ ծայրէն մինչեւ Սպանիոյ կամ Հիւսիսային Ամերիկէի մէջ անոր արեւմտեան ծայրը նաւով ճամբորդելը: 1830ական տարիներուն, երկաթուղիի եւ հեռագրի յայտնագործումէն առաջ, շուրջ 2 շաբաթ կը տեւէր Նիւ Եորքէն Շիքագու լուր հասցնելը:

նի մը, որուն արագութեան համեմատութիւնը շարունակեց բարձրանալ: 38 տարի տեւեց, մինչեւ ու Ժամանակիւնը ներկայութիւն դարձաւ 50 միլիոն ամերիկացիներու բնակարանին մէջ, պատկերասփիւռը այդ մակարդակը նուաճեց 13 տարիէն, քէյպըլ պատկերասփիւռը՝ միայն 10 տարիէն, իսկ համացանցը՝ 5 տարիէն: Այժմ ենթակալ ենք Մուրի օրէնքին, որ կ'ըսէ, թէ տեղեկութիւններ փոխանցող համակարգիչի սարքերուն արագութիւնը պիտի կրկնապատկուի իւրաքանչիւր 18 ամիսը անգամ մը:

Նոյնպէս, մարդկութեան թիւը եւ կեանքի միջին տեւողութիւնը շատ քիչ փոփոխութիւններ կրած են Քրիստոսի ժամանակներէն մինչեւ 19րդ դարու սկիզբը: Կ'ենթադրուի, թէ Հռոմէական կայսրութեան ժամանակներուն աշխարհի բնակչութեան թիւը մէկ միլիոն էր եւ համեմատաբար քիչ փոփոխութիւններ կրած է յաջորդ 1600 տարիներուն: Արդի ժամանակներէն առաջ աշխարհի բնակչութեան թիւը յաճախակի վերիվայրումներ կ'արձանագրէր, կը մալցլէր եւ անկում կը կէտ յաճախ. աճի ու ծաղկումի ժամանակներու կը յաջողէին համաճարակի ու սովի տարիներ՝ մարդկային կեանքը վերածելով վերակենդանացումի եւ անկումի անվերջ պարբերաշրջաններու: Ասիկա շատ հեռու է պատմութեան մեր արդի հասկացողութենէն, որ յարաճուն աճի ու յառաջդիմութեան աստիճանական, սակայն անխուսափելի արշաւ մըն է:

Մարդկային կեանքի միջին տեւողութիւնը 30էն աւելի չէր. հռոմէական ժամանակներէն մինչեւ 19րդ դար: Միացեալ Նահանգներու բնակչութեան աւելի քան կէսը մինչեւ 20րդ դարու սկիզբը իր ապրուստը կ'ապահովէր երկրագործութեամբ: Այժմ միայն 2 առ հարիւր կը զբաղի այդ գործով:

Մինչեւ գրեթէ վերջերս մարդկութեան մեծ մասը օրուան ժամերը կ'որոշէր արեւուն դիրքին համաձայն, իր կեանքը կը դասաւորէր տարուան եղանակներուն դանդաղ կոչույթով եւ կ'ապրէր իր նախահայրերուն անաղական գիտութեամբ ու հաւատալիքներով, որոնք աստիճանաբար կազմուած էին դարերու եւ հազարամեակներու ընթացքին:

այժմ բացուած է առաջին «Սթարպարս» սրճարանը: Մինչեւ գրեթէ վերջերս չհետազօտուած եւ չհարձակաւորուած տարագրեցիկ կային աշխարհի վրայ: Կային նաեւ հասողութեան հետեւ մշակութային անջատ տարածքներ, ինչպէս՝ Մեքքէի Մեծ մզկիթը, Պէյճիկի Արգիլեալ քաղաքը, ամերիկացի նախագահներուն սեռային կեանքը, Փափուս Նիւ Կոլինջայի բլուրները, Նեղոսի ափուհուր եւ Բրիտանիոյ թագաւորական ընտանիքին կապերը: Այս բոլորը զաղտնի էին, եւ մենք անոնց հասողութիւն չունէինք: Այս տարածքները այժմ նսեմացած են լրատուական գրեթէ բացարձակ թափանցիկութեան պատճառով:

Մեր ժամանակաշրջանը յատկանշուած է «անցեալի ապագային» տարօրինակ հակասութեամբ: Մէկ կողմէ՝ արհեստագիտութիւն անախընթաց առիթներ կ'ընձեռէ պահպանելու եւ ուսումնասիրելու անցեալը, միւս կողմէ՝ արհեստագիտական արագ փոփոխութիւնները կը փճացնեն անցեալը, կը բնաջնջեն անաղական մշակոյթները, սովորութիւնները, հաւատալիքներն ու գեղարուեստական արտայայտչամիջոցները:

Արարեակային ալեհաւաքներ ուստարով նկարներ կը փոխանցեն անջրպետէն, կրնանք Քիթը սքէնով եւ համակարգիչով քննել մոմիաները՝ ասանց բանալու գանոնք, այսուհանդերձ Եգիպտոսի հնագրեան կոթողները կը մաշին ահազանգային արագութեամբ, ապականութեան, գանգուածային զբօսարջուրութեան եւ Ասուանի ամբարտաշխի բարձրացող ջրերուն պատճառով: Այս երկու ուղղութիւնները, որոնք հակադիր նպատակներու կը ծառայեն, մեզ կը դնեն այն տարօրինակ հակասութեան դիմաց, թէ Եգիպտոսի թագաւորներու հովիտին դամբարաններուն գոյութեան խաբկանքը կրնանք ապրիլ, սակայն չենք կրնար տեսնել գանոնք:

Հնագրեան կոթողներուն ճակատագիրին, անոնց ֆիգիւրական անցեալին վերաբերող այս հակասութիւնը փոխաբերական մէկ պատկերը կը թուի ըլլալ մշակութային աւելի մեծ հարցի մը, զոր կը դիմագրաւէ արեւմտեան ընկերութիւնը: Մինչ կը սուրանք տեղեկատուութեան դարուն մէջ, ուր աւելի կենսական կը թուի համակարգիչի ծրագրիներու տիրապե-



Շար.ը՝ էջ 10

Պատաստեց՝ L. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ



# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՇԽԱԿ



### Հ. Մ. Բ. Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՌՈՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Շաբաթ, 11 Յունուարին, Սուրի դաշտին վրայ տեղի ունենալիք Ալիի Սայտա - Հ. Մ. Բ. Մ. (Բ. դասակարգի ախոյեանություն) մրցումին համար մեր համակիրներուն պիտի տրամադրուին յատուկ օթոպիւսներ, որոնք կ'եսորուան ժամը 12:00ին պիտի մեկնին Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտէն:

Նշենք, որ օթոպիւսին երթ ու դարձի սակը, առանել՝ դաշտ մուտքի տուժը բոլորը միասին նկատի առնուած է տասը հապարիք. ոսկի միայն:

### ՄՈՍԿՎԱՅԻ ՄԵՉ ՏԵՂԵ ՌԵՆԵՆԱԻԲ ՄՐՅԱՇԱՐՔԻՆ

### «ՓԻՆԻԿ» ԵՐԵՎԱՆ՝ ԱՌԱՆՑ ԲԱՐԱՄԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

Յառաջիկայ Յունուար 18ին Մոսկուայի մէջ (Ռուսիա) տեղի պիտի ունենայ ֆուտպոլի մրցաշարը մը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն ԱՊՀի եւ Պայթեան երկիրներու ախոյեան խումբերը: Այդ մրցաշարքին իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստանի ախոյեան «Փինիկ» երեսն, առանց սակայն Արման եւ Արտաւազը Քարամեան եղբայրներուն: Երկուորեակ եղբայրները մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրած են յունական Փանահայիկ խումբին հետ:

### ԱԶՐԴԷՅՃԱՆ ԴԱՐՁԵԱՂ Չ'ԵՐԱՇԽԱԻՈՐԵՐ ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ

Արբայեանի ըմբշամարտի ֆետերատիոնը երկն յայտնեց, թէ յառաջիկայ Մայիսին Պաքուի մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքին թէեւ որեւէ արգելք չի դնէր Հայաստանի յունահայտեական ռճի ըմբշուորուն մասնակցութեան դէմ, սակայն չի կրնար անոնց անվտանգութիւնը երաշխաւորել:

2002ին ալ Արբայեան դարձեալ նոյն կեցւածքը որդեգրած էր, եւ որուն պատճառով իսրայէլի ըմբշները չէին մասնակցած Պաքուի մէջ կայացած մրցաշարքին:

Նշենք, թէ նոյն այս մրցաշարքը, 2004ին տեղի պիտի ունենայ Երեւանի մէջ:

**ՎԱՆՔ ՓՈՒՍԱՆ ՍՐԲՈՅ ԿՈՅՍԻՆ - ՉՄՍԱՌ**

Հեռ. 09-262706 կամ 09-262664

**ՉՄՍԱՌԻ ՎԱՆԱՎԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԺԱՍԵՐԸ**

(Կիրակի 12 Յունուար 2003էն սկսեալ)

Ժամը	8:00ին Սուրբ պատարագ
Ժամը	9:45ին Ռուսուտեան ժամերգութիւն
Ժամը	10:30ին ձայնաւոր Սուրբ պատարագ
Ժամը	19:00ին երկույեան ժամերգութիւն

**ԱԶԳ. ՆՈՒՊԱՐԵԱՆ - ԽՐԻՍՏԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ**

**ՃԱՇՎԵՐՈՅԹ - ՊԱՐԱՎԱՆՈՒՄ**

Բարձր հովանաւորութեամբ՝

**ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**

Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի

Նախագահութեամբ՝

**Պետական երեսփոխան ՍՈՒՍԱՆԵ ՍԱՖԱՏԻ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 11 Յունուար 2003, երկույեան ժամը 10:00էն սկսեալ, Թրիփոլիի «Ընալիթի Ինն» պանդոկի շքեղ սրահին մէջ:

AGBU-AYA Young Professionals

Has the pleasure of inviting you to a unique & interesting lecture  
Can we Farm the Sea?  
... An approach to the sustainable use of aquatic food resources.  
Satisfy your curiosity by joining us & the only aquaculture consultant & specialist in Lebanon:

**DR. MANAL R. NADER**  
(PhD in Biology & Aquaculture)

In presentation on Friday, January 10, 2003, 8:00 p. m. at AGBU-Demirdjian center, "Asbed" hall, Naccash.

\* The discussion will be followed by a reception.

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՄԱՐԲ ՃԵՔԱՐԸ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԷՆ. ՊԻ. ԷՅ.Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՉ



Տրըք Նովիթցի (թիւ 41)

Էն. Պի. Էյ.ի երեկուան մրցումներուն, Ֆիլատելֆիա Սիքսերս կը բացէր ալ պարտութիւն մըն ալ, երբ իր դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին յետ երկարաձգման ընթացքին 103-94 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Տիբորոյի Փիլթոնայէն: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Ռիչարտ Հեմիլթըն նշանակեց 29 կէտ (որոնց ինը՝ երկարաձգման ընթացքին) եւ 8 ռիպասուն: Բակ Սիքսերսի մարզիկներէն Էլըն Ալվըրսըն՝ 25

մարզիկը, որ իր ասպարէզին ընթացքին տասը հապարկը կ'ստարէ:

Նախապէս անոր ի մը ակից ձոն Սթըքթոն էր Սէճիք ձոն սընը անցած են տասը հապարի սահմանները: Թէեւ ձեքըն յոյս ունի գերականցելու համար ձոնսընը (10141 Էսիսթ), սակայն Սթըքթոնի հասնիլը կը մնայ քիչ մը դժուար (15434 Էսիսթ):

Արլանթայի մէջ, Հոքս 117-99 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Տալա Մալթրիքսէն: Յաղթական կազմին մարզիկներէն Տրըք Նովիթցի նշանակեց 30 կէտ եւ 14 ռիպասուն:

Ստորեւ՝ երեկուան մրցումներուն արդիւնքները.

Տալա Մալթրիքս - Արլանթա Հոքս 117-99

Հիուսթըն Ռոքեթս - Օրլանտո Մէճիք 91-81



Տիբորոյի Փիլթոնայէն, որ կրփորճէ գերագանցել Պուլկի մարզիկ Ճէլըն Ռոքը

Ինտիանա Փէյսըրզ - Նիւ Եորք Նիքս 89-87

Ուաշ. Ուիզարտ - Շիքաօ Պուլզ 101-98

Տիք. Փիլթոնայ - Ֆիլ. Սիքսերս 103-94

Մըն. Վուլվը - Վոլտ. Սթէյթ Ուորիըրզ 102-95

Եուրթա Ճէզ - Ֆէօնիքս Սանզ 99-93

Պոսթըն Սելթիքս - Նիւ Օրլինզ 93-83

Տէնէսի Նակէթ - Մայնթի Հիթ 86-76

Ս. Անթո. Սիթըրզ - Ս. Սուփըրսոնիքս 106-95

Լ. Ա. Էլիթըրզ - Մեմֆիս Կրիզլիզ 103-95

Ստորեւ՝ այսօրուան երկու մրցումներուն յայտագիրը.

Նիւ Ճըրզի Նէքս - Սաքրամենթո Քինկզ Փորթլէնտ Թրէյլ Պլէյզըրզ - Սան Անթոնիո Սիթըրզ

Ստորեւ՝ դասաւորումը.	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
Նիւ Ճըրզի Նէքս	26	9
Պոսթըն Սելթիքս	20	14
Ֆիլատելֆիա Սիքսերզ	19	16
Օրլանտո Մէճիք	19	18
Ուաշինկթըն Ուիզարտ	18	17
Նիւ Եորք Նիքս	12	20
Մայնթի Հիթ	12	23
(Կեդրոնական գօտի)		
Ինտիանա Փէյսըրզ	25	10
Տիբորոյի Փիլթոնայ	23	10
Նիւ Օրլինզ	20	17
Սիլուսթի Պաքս	14	20
Շիքաօ Պուլզ	13	22
Արլանթա Հոքս	12	22
Թորոնթո Ռեփթըրզ	8	27
Էլիվէյնտ Զաւալիթզ	7	29
ԱՐԵՒԵՆԵՆ ԾՐՁԱՆ (Միջարեւմտեան գօտի)		
Տալա Մալթրիքս	29	5
Սան Անթոնիո Սիթըրզ	22	13
Եուրթա Ճէզ	20	14
Հիուսթըն Ռոքեթս	19	14
Մեմֆիս Կրիզլիզ	18	16
Տէնէսի Նակէթ	11	23
Սալթուոք Սանզ	8	26
(Խաղաղական գօտի)		
Սաքրամենթո Էլիթզ	26	9
Ֆէօնիքս Սանզ	22	14
Փորթլէնտ Թրէյլ Պլէյզըրզ	20	13
Սիթթըլ Սուփըրսոնիքս	16	18
Լոս Անջելըս Լէյքըրզ	15	20
Կոլտրն Սթէյթ Ուորիըրզ	14	20
Լոս Անջելըս Էլիթըրզ	13	22

### ԵՐՏՈՂԱՆ ԸՆԴԱՏԱՐԻՄ...

Շարունակուած Ա. Էջէն

Ազգերի նախարարը իր կարգին նշած է, որ Թուրքիա 1990ականներէն ի վեր աշխուժօրէն կ'օգնէ Ազգայնական ռազմական ճարտարարեստի մարզին մէջ: Սաֆար Ապիեւ նաեւ նշած է, թէ վրաստանէն ուսական որոշ միաւորներու Հայաստան տեղափոխումը «կ'ամրապնդէ Հայաստանի ապակի ռուսացական զիբբորուումը եւ կը հակասէ ԵԱՀԿի Պրիստին վեհաժողովի որոշումին»:

Ապիեւի կարծիքով, այդ «օգնութիւն»ը Հայաստանին «անտեղի կոռուստ» է, որովհետեւ Հայաստան «անապագայ եւ անարեւելական պետութիւն է»:

### ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ՝ ԼԻՈՆ - ՄԱՐՍԷՅ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 21րդ հանգրուանի բացման մրցումին այսօր տեղի կ'ունենայ Լիոն - Մարսէյ գագաթի ճակատումը՝ առաջինն դաշտին վրայ:

Պարագլուխի դիրքը գրաւող Մարսէյ, որ այժմ երկու կէտի առաւելութիւն մը ունի Լիոնի վրայ (5րդ), դաշտ պիտի ներկայանայ ամբողջական կազմով: Հիւրընկալ կազմը սակայն ունի բացակայներ: Առաջին հերթին, Լիոնէն շատ հաւանաբար բացակայի Վիլմէյքըր Էրիք Քարիէր, որ 2002 տարուան իր կազմին կատարած վերջին մրցումին (Սթրասնի դէմ) վիրաւորուեցաւ: Այս կարեւոր մրցումէն շատ հաւանական է, որ բացակային նաեւ պրափիցիներ՝ Սոնի Անտրոնի եւ Քլաուտիո Քարպիա:

Մարսէյ, որ գրեթէ բոլորը անակնկալի բերելով՝ ամանորի իր արձակուրդը տօնեց պարագլուխի դիրքին վրայ, կը յուսայ, որ յաղթական պիտի վերադառնայ Լիոնի դաշտէն, մնայլո համար պարագլուխի դիրքին վրայ, որովհետեւ անոր ձախողութեան պարագային պատրաստ են օգտուելու անմիջական երկու մրցակիցները՝ Նիս եւ Կենկան, որոնք միայն մէկական կէտով ետ կը մնան:

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

**ԱՅՍՕՐ**

Լիոն - Մարսէյ

**ՎԱՂԸ**

Ռէճն - ԿԵԿԿԱՆ

Աժաքսիօ - Փարիզ Ս. Ժ.

Օքսէր - Թրուա

Պորտօ - Մոնփելիէ

Լը Հաւրը - Սթրազպուրկ

Լան - Սըտան

Մոնպօ - Պասթիա

Նանթ - Սոչօ

Նիս - Լիլ

21րդ հանգրուանի մրցումներուն, այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեայ պատկերը.

	Յ.	Չ.	Պ.	ԿԵՏ
1.- Մարսէյ	10	5	5	35
2.- Նիս	9	7	4	34
3.- ԿԵԿԿԱՆ	10	4	6	34
4.- Մոնպօ	9	6	5	33
5.- Լիոն	9	6	5	33
6.- Սոչօ	9	6	5	33
7.- Օքսէր	8	5	5	29
8.- Փարիզ Ս. Ժ.	7	7	6	28
9.- Նանթ	8	4	8	28
10.- Լան	7	7	6	28
11.- Լիլ	7	7	6	28
12.- Պորտօ	7	6	7	27
13.- Սթրազպուրկ	7	6	7	27
14.- Պասթիա	7	3	10	24
15.- Սըտան	6	5	8	23
16.- Ռէճն	6	5	9	23
17.- Լը Հաւրը	4	7	9	19
18.- Աժաքսիօ	4	6	10	18
19.- Թրուա	3	7	10	16
20.- Մոնփելիէ	3	7	9	16

### ԼՈՒՐԵՐ՝ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԷՆ

● ՊՈՐՈՒՍԻՍ Տորթուանի պատասխանատուները երեկ յայտնեցին, թէ իրենց ակումբին մաս կազմող նիկերիաքի միջազգային միջնապահ Սանտի Օլիւեհը մինչեւ 2004 թուականը փոխառուած են Պոլսումի:

Հակառակ անոր, որ 28 տարեկան Օլիւեհը մինչեւ 2005 թուական պայմանագրութիւն մը ստորագրած է Պոլսուիլիկայի ախոյեանին հետ, սակայն նկատի առնելով, որ մարզիչ Մարիաս Չաւըր իր ծրագիրներուն մէջ չունի Օլիւեհը, ան փոխառուեցաւ Պոլսումի: Նշենք, թէ Տորթուան համաձայն գտնուած է անոր ամսականին մէկ մասը ինք վճարել:

● ՖՐԱՆՍԱՅԻ մարզիկ Տալա Սթրէյքէ, որ անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ շատ հաւանաբար իր ակումբը՝ Եուլիանթը լքելու հետ, առաջինը կ'ընտրէ Ֆրանսայի Նահանգներու ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներուն (ՎԵՅԵՐ Լիլ)՝ Քոլորադո Ռեփթի միասնով:

31 տարեկան ֆրանսացին, որ ֆուտպոլիստի իր ասպարէզը սկսաւ Մոնպերիէի հետ (մարզիչ Արսէն Վենկելի օրերուն), 1997ին միացած էր Արսէնալի:



Տալա Սթրէյքէ

ՌԻՔՐԱԹԻ ՄԱՐԶԻՆ ՄԵԶ

ԹՈՒՐՔԻԱ - ԹՈՒՐՔՄԵՆԻՍՏԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՐԿ ՏԱԼՈՒ ԿՈՇԵՐ՝ ԷՐՏՈՂԱՆԻ ԿՈՂՄԵ

ԱՆԽԱՊԱՏ, 9 (ԱՅՓ).- Թուրքիոյ իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութեան ղեկավար թախիվ Էրտողան չինգաբթի օր Թուրքմենիստանի հետ ուժանիւթի մարպիւն մէջ աւելի մեծ գործակցութեան կոչ ուղղեց:

Թուրքմենիստանի մէջ նախագահ Սափարմուրաթ Նիպատի հետ տեսակցութեան մը ետք, ան յոյս յայտնեց, որ Թուրքմենիստանէ ելեկտրական հոսանք պիտի հասնի Թուրքիա, եւ թէ «աւելի եւս թափ պիտի տանք գործակցութեան ուժանիւթի մարպիւն, ինչպէս նաեւ առեւտրի եւ տնտեսական յարաբերութեան մէջ»:

Էրտողան, որ կ'ակնկալուի, որ դառնայ Թուրքիոյ յառաջիկայ վարչապետը, Արպայեճան, Թուրքմենիստան եւ Ղազախստան շրջափոխող մը ձեռնարկած է: Անգարայի եւ ուժանիւթով հարուստ շրջանին միջեւ յարաբերութեան մէջ թափ տալու համար Աշխապատ եւ Անգարա կը յուսային, որ ամերիկեան գորակցութիւնը վայելող անդրկասպեան 2000 քմ. երկարութեամբ խողովակին կառուցումը առիթ պիտի ընծայէ անցնելով Արպայեճանէն, Վրաստանէն եւ Թուրքմենիստանէն Թուրքիա՝ բնական կապի փոխարկութեան:

Սակայն 2 միլիար տոլար արժեքի խողովակը բաւաբար խոչընդոտներ դիմադրած է, յատկապէս Թուրքիոյ շատ աւելի մտակար Արպայեճանի մէջ կապի յայտնաբերումով:

2000ին, խողովակին ծրագիրը մեծ հարուած ստացած էր, երբ անոր պատասխանատու ընկերութեանց համախմբումը յայտարարած էր, թէ Աշխապատի մէջ իր գրասենեակները պիտի փակէ՝ այդ երկրին հետ կապին շուրջ անորոշութեան պատճառով:

Ներկայիս ընկերութիւններու այլ համախմբում մը կը ծրագրէ 3,2 միլիար տոլար ծախսել՝ կառուցելու համար խողովակ մը, որ Արպայեճանի Շահ Տենիպ հանքէն Թուրքիա բնական կապ պիտի արտածէ:

Նիպատի հետ տեսակցութեան ետք խօսելով՝ Էրտողան նաեւ դատաւարած է Նոյեմբերին թուրքմենի ղեկավարին դէմ տեղի ունեցած մահափորձը, երբ Աշխապատի մէջ փինեակներ անոր շքախումբին դէմ յարձակում գործած էին:

ԹՈՒՐՔԻԱ

ՌԱԶՄԱԿԱՆ 2 ՕՂԱՆԱԿԵՐ ԿԸ ԶԱՆԶԱՆՈՒԻՆ

ՏԻԱՐՊԵՔԻՐ, 9 (ԱՅՓ).- Թրքական ռազմական 2 օդանավեր ջախջախուած են չինգաբթի օր մարպիւնի առաքելութեան մը ընթացքին, հարաւարելելեան Մալաթիոյ նահանգին մէջ՝ սպաննելով օդանավերուն մէջ գտնուող օդուծի չորս անդամները:

Թրքական սպայակոյտը յայտնած է, թէ չինգաբթի օրուան արկածը թեքնիք խանգարումի մը պատճառով է:

«ԱՆՑԵԱԸ ՆՈՅՆԻՍԿ...»

Շարունակուած՝ 7րդ էջէն

տելը, քան թէ՛ հին լեզուներու, արդար է մտածել, թէ ինչպիսի՞ կապ պիտի ունենաք հնադարեան աշխարհին կամ Միջնադարու եւ վերածնունդի ժամանակներու քաղաքակրթութիւններուն հետ, որոնք ապրած են ճարտարարուեստական յեղափոխութեան նոսր: Արդեօք դասական նիւթերը շարունակ պիտի կրճատուին կրթական ծրագիրներու մէջ, թէ պիտի վերակենդանանան համակարգիչի նոր ու կատարելագործուած ծրագիրներու միջոցով, որոնք կարելի պիտի դարձնեն հնադարեան քաղաքներու թուսային (տիկիթը) վերակառուցումը եւ անոնց հետագոտուութիւնը: Համացանցը մեզի առիթ կու տայ անսահման տեղեկութեան անմիջական հաստատութեան, սակայն անիկա նաեւ կը ստեղծէ վտանգ մը. հետզհետէ կրնանք վերածուիլ այդ բոլոր տեղեկութիւնները պատմական շրջագիծի մը մէջ գետեղելու կարողութեան գուրկ հաւաքականութեան մը: Արդեօք համացանցով կապուած աշխարհ մը աւելի լաւատեղեակ աշխարհ մըն է, արդեօք տեղեկութեան առատութեան մէջ կը կորսուի՞ գիտութիւնը, երբ մարդիկ կը փորձեն նամակներու եւ պատկերներու օրական տարափին մէջէն ջոկել գայն: Տեղեկութեան կորուստը իրողապէս անխուսափելի է, որովհետեւ մեծ փոփոխութիւններ տեղի կ'ունենան նոյնինքն տեղեկատուական արհեստագիտութեան մէջ, մինչ սպազիր բառին գերակայութիւնը կը փոխարինուի վիտեոյի արհեստով եւ համակարգիչով տիրապետուած մշակոյթով: Այստեղ եւս արտասովոր հակասութիւն մը կայ. հնադարեան Միջագետքի սեպագիր առաջին արձանագրութիւնները կրող կաւէ սալիկները տակաւին լաւ վիճակի մէջ են եւ ընթեռնուի, մինչդեռ 1960ական եւ 1970ական տարիներուն ժապաւէնի վրայ պահուած համակարգիչի արձանագրութիւնները կրնան ի սպառ փճացած ըլլալ: Արձանագրութիւն պահելու թուսային միջոցները յարափոփոխ վիճակի մէջ կը թուին ըլլալ: Անոնք տակաւին կախեալ են շօշափելի միջոցներէ, որոնց կեանքը շուրջ 20 տարի է: Անոնք կախեալ են համակարգիչի տեղեկութիւն ամբարոզ սարքերէ եւ ծրագիրներէ, որոնք անգործածական պիտի դառնան 20 կամ 30 տարի ետք:

Անցեալին հետ մեր կապին փոխակերպումը «բարձր մշակոյթի» ակներեւ ոլորտէն անդին կ'երթայ: Զայն կը տեսնենք նաեւ բնութեան այլազանութեան հետ մեր առնչութեան մէջ: Հոս եւս խոր հակասութիւն մը կայ: Երբեքից այսքան բան չենք գիտցած բնութեան եւ մեր կենսաբանական անցեալին վերաբերեալ: Անբերեակալ յարհետագիտութիւններ, ինչպէս՝ մարդկային ծինները որոշող ընթացիկներու վերածանումը, կ'օգնեն, որ գիտնանք, թէ օրինակ՝ խելացի մարդը ինչպէս եղափոխուած է կապիկէն, սակայն միւս կողմէ՝ իրական աշխարհին մէջ մարդանման սեւակապիկներուն (շեմփանզէ) եւ պոնոպոններուն թիւը արագօրէն կը նուազի:

ՄԵՐԺԵԼՈՎ ՊԼԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ

ՇԱՐՈՆ ՆԱՍՏԱՏ ՊԱՇԵՅ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԴԵՄ ԱՐԳԵԼԸ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն հաստատ պահեց պաշտօնինեան պատուիրակութեան մը դէմ հաստատուած արգելքը՝ մերժելով Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրի ներկայացուցած խնդրանքը, յայտնեց բրիտանացի վարչապետին գրասենեակը:

Պլեյր նամակ մը ուղարկած էր Շարոնի՝ խնդրելով, որ արտօնէ պաշտօնինց պաշտօնատարներու Լոնտոն ճամբորդութիւնը, որ պիտի մասնակցին իսրահրա կցական բնոյթ ունեցող կանչիպումի մը: Պլեյրի բան-

բերը յայտնեց, որ Շարոն մերժած է խնդրանքը:

Մեկնաբաններ կրնան, որ Շարոն այս ձեռնարկը հակադրած է Պլեյրի, որ անցեալ ամիս մերժած էր հանդիպում ունենալ արտաքին գործոց նախարար Պենիաիին Ներանիաի հետ, մինչ հիմա կը պատրաստուի հանդիպումի մը Աշխատարանական Կուսակցութեան ղեկավար Ամրամ Միցուայի հետ:

Միւս կողմէ, Իսրայէլի գերագոյն ատենաբեկութեանց որոշում մը, որ արքայ իսրայէլացի երկու երեսփո-

խաններու կ'արգիլէր թեկնածութիւններ կայացնել Յունուար 28ի ընտրութիւններուն համար: Իսրայէլի ընտրական կեդրոնական մարմինը յայտարարած էր, որ Աիմէտ Թիպի եւ Այմի Պշարա զօրավիգ կը կանգնին պաղեստինեան ահաբեկչութեան, հետեւաբար իրաւունք պէտք չէ ունենան ընտրութիւններուն մասնակցելու: Գերագոյն ատենաբեկութեան ղեկավար Միցուայի պնդումը: Պշարա եւ Թիպի որոշումեցին գերագոյն ատենախի մ'ձիրար:

(ԱՅՓ)

ՅԱՄԱԲԱԿԱՆ ԲԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԴԱՄԱՍԿՈՍ ԵՒ ԹՐԻՓՈԼԻ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԵՆ ՄԻ. ԱՅ. ԷՅ.Ի ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրիա եւ Լիպիա անընդունելի նկատեցին Մի. Այ. Էյ.ի այն ամբաստանութիւնը, ըստ որուն, հաւաքական քանդումի պէնքեր կը պատրաստեն: Սուրիական «Թըշ-րիս» պաշտօնաթերթը հաղորդեց, որ ամբաստանութիւնները ամբողջութեամբ անհիմն են: Օրաթերթը աւելցուց, որ ամերիկեան գործակալութիւնները վարպետ են պատմութիւններ հիւսելու, հետեւանքներ «նախատեսելու» եւ «վտանգներէ» պոռնացնելու մէջ: «Թըշրիս» կը գրէր նաեւ, որ ամերիկեան կառավարութիւնը կ'ուզէ չափազանցուած ձեւով ներկայացը-

ղեկագիրը, որ հրապարակուած էր Երեքշաբթի օր, Սուրիան, Լիպիան եւ Սուտանը կ'ամբաստանէր հաւաքական քանդումի պէնքեր ունենալու յանցանքով: Լիպիա եւս հերքեց տեղեկագիրին մէջ նշուած ամբաստանութիւնը: Արտաքին-

գործոց նախարարութեան բանբեր Հասունա Շաուէշ ըսաւ, որ Մի. Այ. Էյ. յաճախ կ'ողողէ նման ամբաստանումներ, որոնք կը ծառայեն ամբաստանութեան թիրախ դարձած երկրներու թշնամիներուն շահերուն: (ԱՅՓ)

ՌԵՎԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՇԵՅ ԼՈՒՒԹԵԱՆ ԴԻՄԱՅ

ՄՈՍԿՈՒԱ ԴԱՐՁԱԾ Է ԱՆ ՀԱՄԲԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 9 (ԱՅՓ).- Մոսկուա չինգաբթի օր յայտնած է, թէ անհամբեր պատասխան մը կը սպասէ Մ. Նահանգներէն՝ ռազմավարական կայունացման նոր համաձայնագիրի մը նախագիծին առնչութեամբ իր առաջարկին, փոխարինելու համար հակամիջցամաքամասային հրթիռներու (Էյ. Էմ.) համաձայնագիրը, որ ներկայիս լքուած է:

Մ. Նահանգներ 1972ին կնքած այդ համաձայնագիրին հրաժարած էին անցեալ տարի, հակառակ ռուսական բուռն բողոքներուն, որպէսզի անոնք կարենան շարունակել հրթիռային պաշտպանութեան իրենց վիճելի ծրագիրին գործարարութիւնը, զոր Էյ. Պի. Էմ. կ'արգիլէր:

Մոսկուա աւելի ուշ կոչ ուղղած էր Ուաշինկթընի, որ ընդունի սահմանափակման նոր համաձայնութիւն մը: Անիկա այս շաբաթ որոշ չափով քաջալերական պատասխան մը ստացած է, երբ Մոսկուայի մէջ Ուաշինկթընի դեսպանը յայտնած է, թէ իր երկիրը պատրաստ է Ռուսիոյ հետ գործակցութիւնը բարելաւել՝ հրթիռային պաշտպանութեան մարպիւն մէջ:

ՊԵՅՑԻՆԿԵՆ ԿՈՇ՝ ՌԻԱՇԻՆԿԹԸՆԻ

ՊԵՅՑԻՆԿ, 9 (ԱՅՓ).- Չինաստան չինգաբթի օր կոչ ուղղած է Մ. Նահանգներու, որ չինսիսային Բորէյայի հանդէպ «աւելի ճկուն կեցածք մը որդեգրէ»:

Ըստ Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերին, արտաքին գործոց նախարար Թանկ Ճիաբուան եւ անոր ամերիկացի պաշտօնակիցը՝ Քոլին Փաուրը, չինգաբթի առաւօտուն տեսակետներ փոխանակած են չինս. Բորէյայի կորիպային հարցին շուրջ՝ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին:

Թանկ Չինաստանի գոհունակութիւնը արտայայտած է ամերիկեան այս շաբաթուան որոշումին մասին՝ Փոնկկեանիկի հետ տիպարակի ձեռնարկելու՝ տագնապին վերջ տալու նպատակով:

Փաուրը Թանկի ըսած է, թէ Ուաշինկթընը թշնամական որբել նպատակ չի հետապնդէր չինսիսային Բորէյայի հանդէպ եւ կը յուսայ շինի տիպարակ մը ունենալ Փոնկկեանիկի հետ՝ կորիպային հարցը լուծելու համար:

Ներկայ տագնապը ծայր տուած էր անցեալ ամիս, երբ Փոնկկեանիկ որոշած էր վերակենդանացնել կորիպային իր ծրագիրը, ապա անիկա արտաքսած էր ՄԱԿի պէնքերու քննիչները:

ՊԱՂՏԱՏ ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Յունուարին: Երկուսն անդեկագիրը պատրաստուած էր գոհացում տալու համար Ապահովութեան հոդուածի հինգ նոր անդամներուն, որոնք մանրամասնութիւններ չունին Իրաքի անցեալ ամիս կատարած յայտարարութեան:

Տեղեկագիրին հրապարակումէն քանի մը ժամ առաջ, Իրաքի նախագահ Սատուամ Հուսէյնի խորհրդատուն՝ Ամէր Սաստի ըսաւ, որ երբ Պիթս Եւ Պարատի Պաղտատ այցելեն Յունուար 19ին, անոնց պիտի փոխանցուին գաւազաններ կարգ մը քննիչներու «ոչ արդարացուցիչ» արարքներուն մասին, որոնք ոչ մէկ ձեւով կ'անոնցին հաւաքական քանդումի պէնքերուն: Սաստի ըսաւ նաեւ, որ քննիչները հարցուցած են հարցումներ, որոնք կապ ունին պիտորական կեդրոններու մէջ հրամանատարութեան ու անձնակազմին մասին:

Սաստի անգամ ըլլալով Պաղտատ կը յայտարարէ, թէ յուսարանութիւն պիտի պահանջէ այս հարցերուն մասին: Քանի մը օրէ ի վեր այլ իրաքցի բարձրաստիճան պաշտօնատարներ իբրեւ լրտեսներ կ'ամբաստանեն ՄԱԿի քննիչները:

Միւս կողմէ, Իրաքեան մամուլը մարտահրաւեր ուղղեց Ուաշինկթընի եւ Լոնտոնի՝ պահանջելով, որ անոնք փաստերով հաստատեն, թէ Իրաք հաւաքական քանդումի պէնքեր ունի: Օրաթերթը ծիծաղաբար զուտ այն պատճառաբանութիւնը, թէ Լոնտոն եւ Ուաշինկթըն չեն ուզեր հրապարակել իրենց ունեցած փաստերուն աղբիւրը. որպէսզի պայն պաշտպանութեան: «Սատուամ» կը գրէր, որ ամերիկացիներն ու բրիտանացիները ստախոսներ ու խաբեքներ են, որովհետեւ եթէ իսկապէս փաստեր ունենային, պանոք պիտի յանձնէին Պիթսի եւ Պարատի:

Պարատի Երեքշաբթի օր կոչ ուղղած էր Միացեալ Նահանգներուն Իրաքի պէնքերու ծրագիրին մասին ունեցած բոլոր տեղեկութիւնները փոխանցելու քննիչներուն: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուրը երեկ պատասխանեց՝ յայտնելով, որ Ուաշինկթըն սկսած է տեղեկութիւններ փոխանցել. շեշտելով սակայն որ կարելի չէ ամէն քան փոխանցել: Փաուրը ըսաւ նաեւ, որ նախագահ Ճորճ Պուշ որոշում չէ տուած պատերազմի մը մասին:

Միացեալ Նահանգներու գլխաւոր դաշնակց Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ճէք Սթրո, որ շրջափոխող մը ձեռնարկած է, ձաքարթայի մէջ յայտարարեց, որ Իրաքի դէմ որդեգրուած միջոցառումներուն նպատակն է սպազիները վայել եւ ոչ թէ վարչակարգը փոխել: Սթրո աւելցուց, որ պատերազմէ մը կարելի է խուսափիլ, եթէ Սատուամ Հուսէյնի հրաժարի հաւաքական քանդումի պէնքերէն: Սթրո դիտել տուաւ նաեւ, որ ամէն մարդ ղոճոճ է Սատուամի իշխանութեան, սակայն բոլոր ճիգերուն թիրախը պայն սպազիներն է. աշխատանք մը զոր կարելի է խաղող միջոցներով իրագործել:

Սթրո ըսաւ նաեւ, որ Արեւմուտքի չափայլ հաւաքական քանդումի պէնքերու սպանալիքէն պէտք է մտահոգուին իսլամական երկիրները: Ինտոնեպիա համաձայն է, որ ՄԱԿի քննիչներ Իրաքի մէջ գործեն, սակայն անիկա կը մերժէ Միացեալ Նահանգներուն կողմէ Իրաքի դէմ միակողմանի որոշումով պիտորական որբել գործողութիւն:

● ՅՐԱՆՍՍՅԻ նախագահ ժաք Շիրաք ըսաւ, որ Իրաքի դէմ պատերազմ մը պիտի նշանակէ, թէ միջազգային ընտանիքը ձախողած է: Ան աւելցուց, որ Ֆրանսա պիտի շարունակէ աշխատանք տանիլ խաղաղութեամբ լուծելու համար տագնապը:

● ՉԻՆԱՍՏԱՆ կոչ ուղղեց ՄԱԿի Ապահովութեան հոդուածի «արդար ու առարկայական» մտեցում որդեգրելու քննիչներուն ներկայացնելիք տեղեկագիրին հանդէպ:

● ԻՐԱՆԻ գերագոյն ղեկավար այսօրուայ Ալի Խամենէյի ըսաւ, որ Իրաքի դէմ պիտորական գործողութեան մը ձախող մը Միացեալ Նահանգներ կ'ուզեն իրենց հակակշիռին տակ առնել Միջին Արեւելքի քարիղի աղբիւրները:

● ԻՐԱՆԻ զօրավիգ կանգնող ցոյցի մը ընթացքին, հարիւրաւոր յորդանանցի ուսանողներ Պաղտատէն պահանջեցին թէլ Աւիւր ունրակոծել:

● ԱՄԵՐԻԿԱՆ ուժերու զօրամաս մը երեկ Բուէյթ հասաւ, միանալու համար արդէն իսկ հոն գտնուող 15 հազար պիտորական:

● ԹՈՒՐՔԻՆՅԱՆ քանակին հրամանատարը հերքեց, որ Անգարա մեծ թիւով ուժ զօրաշարժի ենթարկած է՝ իբրեւ պատրաստութիւն Իրաքի դէմ պատերազմի մը:

(ԱՅՓ)

**N. DEDEIAN s.a.r.l.**  
SANITARY WEAR & TILES

FABBRICA iris  
MARMİ E GRANITI

N. DEDEIAN s.a.r.l. was established in 1951. Since then we are working with sanitary ware ceramic tiles, fittings & hydromassage tubs.

Old Port, bar - Genova - Italia

Planet, ristorante - Reggio Calabria - Italia

Hotel Prusland - Caltanissetta - Italia

Calceoli, Via Marina - Brindisi - Italia

We are sole agents of Italy's finest ceramic tiles Gruppo ARK, Epoca, Tempra, Elle-gi, IRTS.

Those products are all designed to meet the latest dwelling requirements, although perfectly in line with tradition.

LEBANON - Beirut - Mahr El-Mot - Roumieh Highway - N. Devedian Center - Cell. (+961) - 3 - 204300 - Tel. (+961) - 1 - 901092 - Fax: (+961) - 1 - 901093  
LEBANON - Tripoli - El-Mina - Custom St. - Tel. (+961) - 6 - 615095 - Telex: (+961) - 6 - 202126 - E-mail: ndedeian@hotmail.com